

Բենիամինի Որոշումը :

Երևելի պատկերահասան Բենիամին Ուէսդ, որ նախագահ եղած է Լոնտոնի Թագաւորական գեղարուեստից ակադեմիային, տղայութեանը միջոց իր մեծ հանձարը այսպիսի դէպքով մը յայտնած է, որ լսելու արժանի է :

1745-ին յուլիս ամսոյն մէջ, Ուէսդի քոյրը եկաւ իր աղջկովը հանդերձ քանի մը օր իր մօրը քով անցընելու : () ր մը երբոր պզտի աղջիկը կը քնանար օրօրոցին մէջ, Ուէսդ տիկինը հրաւիրեց իր աղջկը որ երթան պարտեզէն ծաղիկ ժողվելու, ու պզտիկը յանձնեց Բենիամինի խնամոցը ինչուան որ իրենք պարտեզէն դառնան, որպէս զի մօղուկները խայթելով չարթնցընեն զանիկայ : Ուստի այսպէս Բենիամին օրօրոցին քով անշարժ կեցած և ձեռքն ալ փետուրէ հօվանոց մ'առած՝ ամենայն սիրով հոգ կը տանէր պզտիկին վրայ : () ուարթ կերպով մը կը քնանար աղջիկը, և քաղցր ժպիտ մը կը փայլէր երեսացը վրայ : անանկ որ Բենիամին մեծ հաճոյք կը զգար զանիկայ անդադար դիտելով : Վրով ստողին վրայ դիպուածով թղթի կտորներ ու կարմիր և սև թանաք կը գտնուէր : Ինքիրմէն ելած՝ առաւ զանոնք ձեռքը, և այլայլութենէն ձեռքը դողդոջուն՝ փորձեց աղջկան կենդանադիրն առնելու : Եկարջութեան ամենին գաղափար մը չունէր, վասն զի նոյն ատենը դեռ եօթը տարեկան էր, ոչ կենդանագիր տեսեր էր և ոչ քանակ : Ետեղով իրեն մօրը տուն դառնալով, չփութած ու խռոված՝ մէկէն ծածկեց ձեռքի ստուերագիրը : Հարցուց մայրը չփութելուն պատճառը : օրուն հնալանդելով տղան՝ տուաւ ձեռքի թուղթը, թողութիւն խնդրելով իր սխալմանը որ առանց հրամանի առեր էր թողութը : Մայրը մէկէն ճանցաւ իր թուան դէմքը, և փոխանակ յանդիմանելու, ինչպէս որ խեղճ տղան կը վախէր, ողջագուրեց զինքը : Եսկէց քա-

ջալերուած տղան՝ խնդրեց մօրմէն ձեռքի եղած ծաղկանց փունջն օրինակել : Եւ առ կերպով արթնցաւ իր հանձարը, և իմացաւ որ անկէց վերջը կըրնար ուզած բաներն օրինակել :

Եւ յիշուածս հանդիպեցաւ Բենիամինի () իացեալ Եւ հանգաց Բենիամինի նահանգին մէջ, մերձ ի Սերինկֆիլտ, ուր ծնած էր Ուէսդ :

Նորատիւյ Մատենաք

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵՐԵՐԱՆԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ

ՃԱՌՔ

Յովհան Ոսկերեան հայրապետին Պօղոսի Թղթոց մեկնութեան և այլ և այլ նիւթերու վրայ խօսած հոգեւոր ճառերուն տպագրութեան սկսելուն վրայ անցեալ տարուան Բագմավիպին Նոյեմբերի Թերթին մէջ էջ 559՝ խօսուած ըլլալով, այսչափ միայն կ'իմացընենք հոս որ հարազատ ճառերուն հատորն ի լոյս ելաւ, որոնց թիւն է եօթանասունուրեք : Ան ամէն բանասէր որ Ոսկերեանի եռանդուն և բեղնաւոր պերճախօսութեանը սիրող են և միանգամայն կը փափաքին որ նախնեաց երկասիրութիւնները տպագրութեամբ օգտակար ըլլան հասարակաց, անտարակոյս պիտի ուրախանան իրենց ըղձից մասամբ կատարուելուն վրայ և պիտի քաջալերեն հրատարակիչներն որ նախնեաց ուրիշ գրուածքներն ալ ետեւէ ետեւ ի լոյս հանեն :

ՓԵՂԻՐԱ

ՈՂԵՐԳՈՒԹԻՒՆ Յ. ՌԱՍԽԻ

Փեղրա ողբերգութիւնը Յ. Ռասխիի փափուկ ու զգայուն գրչէն ելած ըլլալով գովեստի կարօտ չէ : Թէ որ հեղինակը Գորդիան գրած չըլլար, Փեղրան կը մնար իրեն պարծանք ու գլուխ գործոց : Ասկէց անտարակոյս յորդորուած ազգային բանասէր և աշխոյժ երիտասարդներ, Գ. Հիւր-

միւզեան խղուարդ արքեպիսկոպոսին կիրթ
թարգմանութեամբն ուղեր են ընծայել
զայն ի վայելս ընդհանուր գրասիրաց ազ-
գիս: Փերթուածոյն անստգիւտ գրութիւնն
օրինակ կրնայ ըլլալ՝ որ անարգագոյն կըր-
քերն ալ կրնան առանց համեստ ականջ-
ները խայթելու նկարագրուիլ:

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԶ

ԱՂԵՔ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԱՅ

Ամէն հասակի անձանց համար ախոր-
ժելի և օգտակար գիրք մը կրնայ ըլլալ
Լուգովիկոս ԺԶի և իր ընտանեաց քաջած
տառապանքներուն պատմութիւնը, որուն
մէջ աշխարհաբար լեզուով նկարագրուած
են արդար թագաւորի մը երջանկութեան
ժամանակը, իշխանութենէ իյնալը, բան-
տարգուիլը և իբրեւ մեծեղեւն յանցաւոր
սպաննուիլը: Թագուհւոյն ու թագաւորին
քրոջն օրըստօրեայ մարտիրոսական կեան-
քը. և վերջապէս՝ թագաւորութեան ծաղ-
կահասակ յաջորդին ոչ սրով կամ թու-
նով, այլ խռովարարներուն հնարած դան-
դաղ մահուամբը գերեզման մտնալը: Եր-
կու մասն բաժնուած է այս սրտաշարժ
պատմութիւնը և մէկ հատորի մէջ ամփո-

փուած. ունի նաև երկու պատկեր, որ կ'
ներկայացընեն զԼուգովիկոս ԺԶ և զթա-
գուհին Մարիամ Անդուանէթ:

ՀԱՄԱՌՈՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԳՂԻՈՅ

ԼԱՄԵ-ՅԼԵՕՐԻ ԳԱՂՂԱՑԻՈՅ

Դպրոցաց համար

Լամէ-Յլէօրի արգի հեղինակին պատ-
մութեան դասագրքերը Գաղղիոյ դպրո-
ցաց մէջ շատ կը գործածուին. որովհետ
իւրաքանչիւր ազգի պատմութիւնը գլխա-
ւոր դիպուածներու և գլխաւոր անձան
վրայ կը բաժնէ, տղոց միտքն աւելորդ տե-
ղեկութիւններով չբեռնաւորելու համար
պատմելու կերպն ալ դիւրիմաց ու ընտա-
նեկան է: Թէ որ ազգային դպրոցաց ուսու-
ցիչներուն հաճոյ անցնի Անգղիոյ Պատմու-
թեան ոճը, խոստացուած է գրքին յառա-
ջաբանին մէջ Լամէ-Յլէօրիի միւս հատ-
որիկներն ալ հետզհետէ հրատարակելու:

